

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ գիտական խորհրդի

2016 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 3 նիստում

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

_____ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կարգը:

1.2. Սույն կանոնակարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:

1.3. Բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորման շնորհումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015թ. հուլիսի 3-ի թիվ 647-Ա/Ք հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի համաձայն, իսկ ուսուցումը կազմակերպվում է «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման օրինակելի կարգի» պահանջներին համապատասխան:

1.4. Մանկավարժի որակավորում ստանալու համար կազմակերպվող դասընթացներին ուսանողները մասնակցում են կամավորության սկզբունքով՝ ՀՀ ԿԳ նախարարության հետ համաձայնեցված մասնագիտությունների ցանկի հիման վրա:

1.5. Բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու համար ԵՊՀ-ում կիրարկվում է «240 կրեդիտ + 30 կրեդիտ» համակարգը, համաձայն որի մանկավարժի որակավորում ստացող ուսանողների համար նախատեսվում է 30 կրեդիտ ծավալով մանկավարժական լրացուցիչ կրթաբլոկ:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹԱԲԼՈԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

2.1. Մանկավարժական կրթաբլոկը ներառում է 6 մոդուլ՝ 4 բաղադրիչով .

- ա) կրթական (4 դասընթաց),
- բ) հետազոտական (կուրսային աշխատանք),
- գ) մանկավարժական պրակտիկա,
- դ) ամփոփիչ ավարտական քննություն:

2.2. Մանկավարժի որակավորում ստանալու համար ուսանողները բակալավրիատի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում պետք է գրանցվեն մանկավարժական կրթաբլոկի ծրագրում՝ դիմում ներկայացնելով ֆակուլտետի դեկանատ մինչև տվյալ ուսումնական տարվա ապրիլի 1-ը: Դիմում ներկայացրած ուսանողների հետ մեկ ամսվա ընթացքում կնքվում է պայմանագիր:

2.3. Մանկավարժական կրթաբլոկով ծրագրի ուսումնառությունը կազմակերպվում է 3-րդից 8-րդ կիսամյակներում (կրեդիտների քանակը՝ 30):

2.4. Մանկավարժական կրթաբլոկի դասընթացները կազմակերպվում են վճարովի հիմունքներով: Վճարումը կատարվում է յուրաքանչյուր կիսամյակ՝ տվյալ կիսամյակի կրեդիտների քանակին համապատասխան: Մեկ կրեդիտի արժեքը (ինքնարժեքի սկզբունքով) սահմանվում է ամեն ուսումնական տարվա համար ռեկտորի հրամանով:

2.5. Մանկավարժական կրթաբլոկի մոդուլից անբավարար գնահատական ստանալը չի սահմանափակում հիմնական մասնագիտության շրջանակում փոխատեղման մրցույթին մասնակցելու կամ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստանալու ուսանողի իրավունքը:

2.6. Մանկավարժական կրթաբլոկի «Մանկավարժություն» առարկայի ամփոփիչ քննությունը չհանձնելու դեպքում ուսանողը ստանում է հիմնական մասնագիտության գծով դիպլոմ՝ առանց մանկավարժի որակավորման:

2.7. Երևանի պետական համալսարանի բակալավրիատի կրթական ծրագրի «240 կրեդիտ + 30 կրեդիտ» մանկավարժական դասընթացների կրթաբլոկով ուսումնառության ավարտին շնորհվում է երկու որակավորում՝ բակալավրի աստիճան՝ հիմնական մասնագիտության գծով և մանկավարժի որակավորում:

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹԱԲԼՈԿԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Մանկավարժական կրթաբլոկի տեսական դասընթացներն անցկացնողների 50 տոկոսը պետք է ունենա պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչում, իսկ գործնական դասընթացները վարող մասնագետների գիտահետազոտական հետաքրքրությունների շրջանակը պետք է համապատասխանի դասավանդվող դասընթացներին:

3.2. Մանկավարժական կրթաբլոկի դասախոսական կազմը պարտավոր է պարբերաբար անցնել որակավորման բարձրացման դասընթացներ՝ ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված՝ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Մանկավարժական կրթաբլոկով ծրագրի արդյունավետ կազմակերպման համակարգումը վերապահվում է ԵՊՀ-ի ուսումնամեթոդական վարչությանը և ֆակուլտետներին:

4.2. Մանկավարժի որակավորում շնորհելու համար սահմանված «240 կրեդիտ + 30 կրեդիտ» համակարգը գործողության մեջ է դրվում 2017-2018 ուսումնական տարվանից, բացառությամբ 2.2.-րդ կետի, որը գործողության մեջ է դրվում 2016-2017 ուսումնական տարվանից:

**ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹԱԲԼՈԿԻ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (Առկա ուսուցում)**

Մանկավարժական կրթաբլոկում ներառված է 6 մոդուլ

Մոդուլ 1.- Հոգեբանություն – 3 կրեդիտ

| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|------------------------------|-----------|----------|---------------------------|
| 1.1 Ընդհանուր հոգեբանություն | 3 կրեդիտ | III | առանց եզրափակիչ գնահատման |

Մոդուլ 2.- Մանկավարժություն – 5 կրեդիտ

| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|---------------------------------------|-----------|----------|---------------------------|
| 2.1 Ընդհանուր մանկավարժություն | 3 կրեդիտ | IV | Եզրափակիչ գնահատմամբ |
| 2.2 Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ | 2 կրեդիտ | VII | առանց եզրափակիչ գնահատման |

Մոդուլ 3.- Մեթոդիկա – 4 կրեդիտ

| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|--------------------------|-----------|----------|------------------------|
| 3.1 Դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | V | Եզրափակիչ գնահատմամբ |

Մոդուլ 4.- Կուրսային աշխատանք – 2 կրեդիտ

| ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|--|-----------|----------|------------------------|
| Մանկավարժությունից/ դասավանդման մեթոդիկայից | 2 կրեդիտ | VI | ստուգարք |

Մոդուլ 5.- Մանկավարժական պրակտիկա – 8 կրեդիտ

| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|------------------------|-----------|---------------|------------------------|
| Մանկավարժական պրակտիկա | 4 կրեդիտ | VI /4 շաբաթ/ | ստուգարք |
| Մանկավարժական պրակտիկա | 4 կրեդիտ | VII /4 շաբաթ/ | |

Մոդուլ 6.

| ԱՄՓՈՓԻՉ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ |
|------------------------------|-----------|----------|
| Ամփոփիչ ավարտական քննություն | 8 կրեդիտ | VIII |

**ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹԱԲԼՈԿԻ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (Հեռակա ուսուցում)**

Մանկավարժական կրթաբլոկում ներառված է 6 մոդուլ

Մոդուլ 1.- Հոգեբանություն – 3 կրեդիտ

| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|------------------------------|-----------|----------|---------------------------|
| 1.1 Ընդհանուր հոգեբանություն | 3 կրեդիտ | V | առանց եզրափակիչ գնահատման |

Մոդուլ 2.- Մանկավարժություն – 5 կրեդիտ

| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|---------------------------------------|-----------|----------|---------------------------|
| 2.1 Ընդհանուր մանկավարժություն | 3 կրեդիտ | VI | Եզրափակիչ գնահատմամբ |
| 2.2 Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ | 2 կրեդիտ | IX | առանց եզրափակիչ գնահատման |

Մոդուլ 3.- Մեթոդիկա – 4 կրեդիտ

| ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|--------------------------|-----------|----------|------------------------|
| 3.1 Դասավանդման մեթոդիկա | 4 կրեդիտ | VII | Եզրափակիչ գնահատմամբ |

Մոդուլ 4.- Կուրսային աշխատանք – 2 կրեդիտ

| ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|--|-----------|----------|------------------------|
| Մանկավարժությունից/ դասավանդման մեթոդիկայից | 2 կրեդիտ | VIII | ստուգարք |

Մոդուլ 5.- Մանկավարժական պրակտիկա – 8 կրեդիտ

| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ | Քննություն ստուգարք |
|------------------------|-----------|----------------|------------------------|
| Մանկավարժական պրակտիկա | 4 կրեդիտ | VIII /4 շաբաթ/ | ստուգարք |
| Մանկավարժական պրակտիկա | 4 կրեդիտ | IX /4 շաբաթ/ | |

Մոդուլ 6.

| ԱՄՓՈՓԻՉ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ | ԿՐԵԴԻՏՆԵՐ | ԿԻՍԱՄՅԱԿ |
|------------------------------|-----------|----------|
| Ամփոփիչ ավարտական քննություն | 8 կրեդիտ | X |

